

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,  
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ**  
***COMMUNICATIONS, NOTES  
ET DISCUSSIONS***



## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ-ԴԱՐՁՈՒԱԾԱՑԻՆ ՄԻԱԻՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համեմատութիւն-դարձուածային միաւորները (այսուհետեւ՝ ՀԴՄ) խօսքի պատկերաւորութեան հիման վրայ առաջացած երկանդամ կայուն, պատրաստի վերարտադրելի եւ մասամբ կամ ամբողջութեամբ վերաիմաստաւորուած կապակցութիւններ են:

Որպէս պատրաստի վերարտադրելի իւրայատուկ կառոյցներ՝ ՀԴՄները լեզուի դարձուածանու մէջ զգալի տեսակարար կշիռ ունեն:

ՀԴՄների հիմքում ընկած պատկերաւոր համեմատութիւնն արտայայտում է որեւէ առարկայի ու նրա յատկանիշի կամ գործողութեան, այլեւ յատկանիշի յարաբերութիւնը մէկ այլ առարկայի յատկանիշի, գործողութեան հիմնական կամ ընդհանուր յատկանիշների հետ:

ՀԴՄների կազմութեան համար անհրաժեշտ է երեք անդամ. համեմատութեան առարկան, համեմատութեան յենակէտը, որ պատկերաւորութեան կրողն է, եւ այն ընդհանուրը, որ յատուկ է թէ՛ առարկային եւ թէ՛ համեմատութեան յենակէտին<sup>2</sup>:

Համեմատենք.

- Մարգարեխն (1) իբրեւ լուսաւորք ... (2) ծագեցին (3): (Ագար. 132)
- Եւ ամենայն քագաւորութիւնն (1) փշրեցան (3) որպէս զանաւք բրտի (2): (Ղեւ. 143)
- Քաղցր են (3) քանք քո (1) քան զմեղը .... (2): (Ագար. 268)

<sup>1</sup> ԲԱԴԻԿԵԱՆ, Խ. Գ., Դարձուածային ոճարամութիւն, Երեւան 2000, 22:

<sup>2</sup> Հմմտ. ՀԱՅԱՐԱՅԻ, Ա. Շ., Փրազեология современного французского языка, “Высшая школаюса”, Москва 1987, 112:

**ՀԴՄներում ընդհանրապէս,** հին հայերէնի այդօրինակ կառոյցներում մասնաւորապէս հանդիպում են միագագաթ եւ երկգագաթ կամ երկանդամ կապակցութիւններ: Ըստ որում, միագագաթ ՀԴՄներում բացակայում է համեմատութեան եզրերից մէկը, տուեալ դէպքում՝ գերագաս բաղադրիչը: Այդօրինակ ՀԴՄները ձեւաւորւում են խնդրով եւ տարբեր նախադրութիւններով: Ընդսմին նրանցում կարող են լինել ծաւալումով եւ առանց ծաւալումի հանդէս եկող միաւորներ:

Գրաբարի երկգագաթ ՀԴՄների ստորագաս անդամը ձեւաւորւում է քան, իբր // իբրեւ, որպէս, այլեւ զօրէն, գունակ // պէս գունակ // որպէս գունակ, օրինակ // օրինակ իմն, նման, համեմատ, յանցոյն, նմանութիւն, գերդ, որչափ, մինչեւ, չափ նախադրութիւններով (կամ յետադրութիւններով)<sup>3</sup>: ՀԴՄների կազմում հանդիպում են նաև ըստ + նմանութեան + գոյական, ըստ + տրական, ըստ + հայցական եւ ըստ + բացառական հոլովներով խնդիր կաղապարներով երկրորդական բաղադրիչներ:

**Համեմատենք հետեւեալ երկգագաթ եւ միագագաթ ՀԴՄները.** լիբր քան զամենայն շուն, գեղեցիկ իբրեւ զլուսին, տեսանել իբր ընդ հայելի օրինակաւ, փշրել որպէս զանաւթ քրտի, զօրէն վարդի, շանց գունակ, օրինակ իմն որպէս փոք-որիկ, նման մեղուի, համեմատ Յիսուսի, յանցոյն մահու, զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, գերդ ի սպի, որչափ յական քօքափել, մինչեւ ի մահ, ոգուով չափ, ըստ նմանութեան հայելով ցուցանել, ըստ

3 Գրաբարի քերականներից Մ. Զամչեանը նախադրութիւնները բաժանում է հոլովակերտների եւ հոլովառու բառերի: Հեղինակը հոլովակերտներն անուանում է նախդիրներ, իսկ հոլովառու բառերը՝ նախադրութիւններ (տե՛ս ԶԱՄՉԵԱՆՑ, Մ., Քերականութիւն հայկագեան լեզուի, Վենետիկ Ս. Ղազար, 1843, 71):

Մ. Սերաստացին նախադրութիւնների մէջ տարբերակում է հոլովակերտներ, հոլովառու բառեր եւ «քաղաքրականք» տեսակները: Ըստ նրա՝ նախդրութիւնները չունեն քերականական յատկանիշներ (տե՛ս ՍԵՐԱՍՏԱՑԱՑ, Մ., Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկագեան սեռի, Վենետիկ 1730, 206):

Ըստ Ա. Բագրատունու՝ հոլովառու բառերը, ըստ խնդիրի նկատմամբ շարադասութեան, բաժանում են նախադրութիւնների եւ յետադրութիւնների: Այդօրինակ բառերը տարբեր հոլովներով խնդիր առնելով, արտայայտում են քերականական որոշակի իմաստներ (տե՛ս ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԻ, Ա., Հայերէն քերականութիւն ի պէտու զարգացելոց, Վենետիկ Ս. Ղազար, 1852, 119):

օրինակի երիտասարդի, ըստ կամս անձանց իւրեանց, անարատ ըստ մարդկանց եւ այլն:

**Մասնագիտական գրականութեան մէջ ընդհանուր առմամբ տարբերակում է ԴՄների, այդ թում՝ ՀԴՄների երկու տիպ՝**

ա) դարձուածքներ, որոնք համընկնում են բառակապակցութիւններին,

բ) դարձուածքներ, որոնք համընկնում են նախադասութիւններին<sup>4</sup>:

Բառակապակցութեան ձեւաւորումով ՀԴՄներն ըմբռնում են որպէս անուանողական, իսկ նախադասութեան կառուցուածք ունեցողները՝ հաղորդակցական արժէքով կապակցութիւններ։ Հստ որում, անուանողական արժէքով ՀԴՄները յարաբերակցւում են բառերի բառաքերականական կարգերին՝ խօսքի մասերին, միաժամանակ շարահիւսական մակարդակում՝ նախադասութեան կառուցուածքային դիտուածքում, հանդէս են գալիս որպէս նրա մէկ անդամ։ Իսկ հաղորդակցական ՀԴՄները, ձեւաւորումով լինելով նախադասութիւններ, վերարտադրուում են որպէս խօսքի աւարտուն հատուածներ։

### Ա. ՀԱՅՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

#### ԴԱՐՁՈՒԱԾՍՑԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԻՄՍԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Իւրաքանչիւր հաղորդակցական ԴՄ, կազմուելով նախադասութեան կաղապարով, նրա նկատմամբ գրսեւորում է թէ՛ ընդհանութիւններ, թէ՛ տարբերութիւններ։ Այդ կարգի ՀԴՄներին բնորոշ են ստորոգումը՝ յատկանիշի վերագրումն առարկային (Շատախօսութեանն հոսանք իրեւ յաղբերէ դիմեն Խոր. 249), հնչերանգը, որ կարեւորուում է նախադասութեան ամբողջականութեան, մտքի աւարտուածութեան առումով։ Ինչ վերաբերում է հաղորդակցական ՀԴՄներում արտայայտուած եղանակաւորման, ժամանակի, դէմքի, թուի, հաստատման-ժխտման քերականական, ապանքին, ապանքի, հանդէս են գալիս միայն ստորոգման, հնչերանգի եւ մտքի աւարտուածութեան պայմաններում։

4 РАЙХШТЕЙН, А. Д., *Сопоставительный анализ немецкой и русской фразеологии*, “Высшая школа”, Москва 1980, 14:

**Հաղորդակցական ՀԴՄներին բնորոշ են ընդհանրապէս ԴՄներին յատուկ բոլոր յատկանիշները՝ կայունութիւնը (իմաստային, գործառական, բառային կազմի կայունութիւն), պատրաստի վերարտադրելիութիւնը եւ վերախմաստաւորումը:**

**Առհասարակ նախաղասութիւն-դարձուածքները վերախմաստաւորման առումով ամենաամբողջականն են՝:**

**Նախաղասութեան ձեւաւորում ունեցող կամ հաղորդակցական ՀԴՄներում մեծ մասամբ առանձնացւում են միաբեւեռ կամ միակողմ վերախմաստաւորումով կապակցութիւններ՝<sup>6</sup>:**

**Հմմտ. Թէ ունիցիք հաւատս որչափ զիատն մանամիոյ (ԱԲ, 121 - Եթէ գոնէ մի փոքր հաւատս ունենաք): Սիրեացես զընկերն իբրև զանձն քո (Եզն., 277 - Զափազանց շատ պիտի սիրես ընկերողդ): Պնդեսա' իբրև այր զմէց քո (Ագաթ., 168 - Խիզախաբա՛ր գօտեպնդուիր):**

**Իդիոմատիկ յատկանիշով<sup>7</sup> տարբերակուող հաղորդակցական ՀԴՄները գրաբարում խիստ հազուադէպ են: Այդ կարգի եզակի օրինակներից է՝ Որպէս ի ծովու ալեկոծիմք (ԱԲ, 121 - Ճնշող հոգեվիճակի մէջ ենք գտնւում):**

**Հաղորդակցական արժէքով հանդէս եկող ՀԴՄները կարելի է դասակարգել ըստ իմաստային հետեւեալ խմբերի.**

### 1. Մարդկանց վիճակը կամ տեսքը բնութագրող ՀԴՄներ.

Թեպէտ էր մարմնով փոքր, այլ ոչ որքան զմակեդոնացին Աղեմանդր (ԱԲ, 121 - Մարմնով որքան էլ փոքր լինէր, Ալեք-

5 ԲԵԴԻՐԵԱՆ, Պ. Ս., Ժամանակակից հայերէնի դարձուածանութիւն, «Լոյս» հրտ., Երեւան 1973, 181:

6 Այդօրինակ ՀԴՄներին բնորոշ է դարձուածայնօրէն կապուած անդամի (անդամների) առկայութիւնը: Ըստ որում, բառի դարձուածայնօրէն կապուած իմաստը կապակցութեան կազմում եւ նրա շնորհիւ ձնուք բերուած իմաստն է (տե՛ս Օ. Ս. ԱХՄԱՆՈՎԱ, *Словарь лингвистических терминов*, «Сов. Энциклопедия», Москва 1969, 164, 503):

7 Իդիոմներին բնորոշ է ամրողական վերախմաստաւորումը:

Ըստ է. Խ. Ռոտի՝ եթէ դարձուածքներում գերադաս անդամը պահպանում է իր բառային նշանակութիւնը, ապա իդիոմներում այն ինչ-որ կերպ նոր իմաստաւորուած է հանդէս գալիս (տե՛ս РОТТ, Է. Խ., *Компаративные фразеологизмы в русском, немецком и французском языках*, Сб. Вопросы романо-германского языкоznания, ЧГПИ, Челябинск 1967, 118):

**սանդր Մակեդոնացու չափ փոքր չէր):** Քանի զդրամ խայծ ոչ գտաներ ողջ ի մարմնի նորա (Անդ, *Մի փոքր առողջ հատուած չկարնրա մարմնի վրայ*) եւ այլն:

**2. Մարդկանց ներքին-հոգեբանական վիճակները բնութագրող ՀԴՄներ.**

Բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով (ԱԲ, 121 - **Շատ-շատ են խոցում իրենց խօսքերով**): Խռատանայ ի վեր քան զմարդ, եւ քան զմժիխ ազդել ոչ կարէ (Անդ, *Մարդու ուժերից վեր խոստումներ է տալիս եւ ոչինչ չի կարողանում անել*): Տրտում եմ անմիջիքար մինչեւ ի մահ (Փարա., 197 - **Չափազանց տխուր եմ**):

**Անձի միաժամանակ թէ՛ արտաքին, թէ՛ ներքին վիճակներն է բնութագրում իրեւ յաղըերակաց հոսէին յաշաց իւրեանց (ԱԲ, 121 - Արցունքները թափւում էին ինչպէս աղբիւրներից - Խստ տխուր էին) ՀԴՄն:**

**3. Որեւէ գործողութեան ընթացքն է բնութագրում հետեւեալ միակազմ նախադասութիւն - ՀԴՄն.**

Զկէս Աւետարանի ընտրել առնուլ՝ եւ զկէսն իրեւ զխոտան ի բաց քողով (Եզն., 253 - **Աւետարանի կէսն ընտրել, միւս կէսն աւելորդ համարելով՝ դէն նետել**):

**4. Որեւէ գործընթացի՝ բացասական արդիւնքով աւարտ է ցոյց տալիս:**

Անսաստութիւնն եղեւ պատճառ մահուան մարդոցն իրեւ յանցաւորի (Եզն., 47 - **Անսաստութիւնը մարդկանց չարաչար մահուան պատճառ եղաւ**) հաղորդակցական ՀԴՄն:

## **Բ. ԱՆՈՒԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՈՒԱԾՍՑԻՆ ՄԻԱԼՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՑԻՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հնդհանրապէս լեզուի բառային մակարդակում կատարում է բառերի իմաստային դասակարգում ըստ այն յարաբերութիւնների, որոնք գոյութիւն ունեն մի կողմից՝ բառերի ներսում (նրանց իմաստային կառուցուածքում), միւս կողմից՝ բառերի միջեւ: Հստ այդ դասակարգման՝ տարբերակում են բառերի ներսում եւ բառերի միջեւ դիտարկուող իմաստային յարաբերութիւններ: Հստ որում, բառերի ներսում առկայ իմաստային յարաբերութիւնները ներբառութային իրողութիւններ են. միեւնոյն բառի իմաստային կառուցուածքում կարող է լինել մենիմաս-

տութիւն կամ բազմիմաստութիւն: Իսկ բառերի միջեւ դիտարկուող իմաստային առնչակցութիւնները միջբառութային իրողութիւններ են: Միջբառութային յարաբերութիւններ ունեցող բառերը դասակարգուում են հօմանիշ, հականիշ եւ համանուն տեսակների<sup>8</sup>:

Վերը նշուած դիտարկումները յատկանշական են նաեւ դարձուածքների՝ որպէս միջմակարդակային միաւորների համար:

Գրաբարի ՀԴՄների մակարդակում քննարկենք դարձուածային իմաստային յարաբերութիւններն ինչպէս ՀԴՄների ներսում, այնպէս էլ այդօրինակ միաւորների միջեւ:

### Ա. Ներկապակցական իրողութիւններ

ՀԴՄների իմաստային կառուցուածքում կարող են ի յայտ գալ նոյն այն իրողութիւնները, որոնք դիտարկելի են բառոյթային մակարդակում. միայն թէ ՀԴՄների ներսում քննարկման առարկայ կարելի է դարձնել մենիմաստութեան եւ բազմիմաստութեան երեւոյթները (այդօրինակ կառոյցները՝ որպէս պատրաստի միաւորներ, վերաիմաստաւորուած կապակցութիւններ են բաղադրիչների փոխաբերական գործածութեամբ):

Միւս կողմից՝ ինչպէս դարձուածքների, այնպէս էլ ՀԴՄների շրջանակներում բազմիմաստութիւնը սահմանափակ դրսեւորումներ ունի: Այս մարզում գերակշռուում են մենիմաստ կառոյցները, որոնք արտայայտում են միայն մէկ իմաստ, հմմտ. արեան չափ (չատ-շատ), սեաւ իրքեւ զագուա (չափազանց սեւ), յորդել իրքեւ զիեղեղ (առատօրէն յորդել) եւ այլն:

Բազմիմաստ ՀԴՄները հանդէս են գալիս մէկից աւելի (հիմնականում երկու) իմաստային առումներով. վերջիններիս միջեւ անպայման առկայ է միաւորող ընդհանուր որեւէ տարր (յատկանիշ կամ առանձնայատկութիւն)<sup>9</sup>:

8 ԽՍՀԱՏԲՆԱՆ, Լ. Մ., Լեզուարանութեան Անդամութիւն, «Զանգակ-97» հրտ., Երեւան 2008, 139-142:

9 Ընդհանրապէս դարձուածքն առաջին հերթին բառակապակցութիւն է՝ յարաբերակից բառին, եւ վերջինիս բնորոշ իրողութիւններից շատերը տիպական են նաև դարձուածքի համար:

10 Ինչպէս բառերի, այնպէս էլ դարձուածքների, տուեալ դէպքում՝ ՀԴՄների իմաստները միմեանց հոմանիշ են:

**Ինչպէս** դարձուածքներն ընդհանրապէս, այնպէս էլ **ՀԴՄ-ները** մասնաւորապէս կարող են վերաիմաստաւորուել նաեւ առանց փոխաբերութեան<sup>11</sup>, թէեւ այդ իմաստների միջեւ կան ընդհանրութիւններ (դարձուածային իմաստ, վերաիմաստաւորուած-դարձուածային նշանակութիւն կամ փոխաբերութիւն):

Բառերի փոխաբերական իմաստները կարող են արտացոլուել նաեւ կայուն կապակցութիւնների, այդ թւում՝ **ՀԴՄների** մէջ. վերջիններիս մեծ մասի իմաստները բացատրելի են նրանց առանձին բաղադրիչների նշանակութիւններով: Հմմտ. ստորեւ բերուող **ՀԴՄների** իմաստային առումները.

Խոզի նման - 1. շատ կեղտոտ, 2. պիղծ:

Իբրեւ ընդ հայելի օրինակաւ - 1. շատ պարզ տեսանելի, 2. հասկանալի՝ բացայայտ:

Քան զիրեշտակս - 1. շատ գեղեցիկ, 2. խիստ բարի:

Զօրէն վարդի - 1. խիստ վառ կարմիր, 2. չափազանց գեղեցիկ:

**Հետեւեալ** **ՀԴՄների** բաղադրիչները կապակցութեան ներսում ձեռք են բերել ոչ ազատ կամ դարձուածայնօրէն կապուած իմաստներ.

Օրինակ իմն կիսամահ (նաեւ՝ իբրեւ զմեռեալ) - 1. շատ դանդաղ, 2. շատ տխուր՝ յուսահատ վիճակում:

Իբրեւ զշանքահար - 1. յանկարծակի, 2. անակնկալի եկած՝ սարսափահար վիճակում:

**ՀԴՄների** խօսքիմասային արժէքին անդրադառնալիս հարկ է քննել տարարժէք կապակցութիւնները, որոնք վեր են հանում բազմիմաստութեան եւ խօսքիմասային տարարժէքութեան միջեւ առկայ փոխադարձ կապերը. **ՀԴՄների** բազմիմաստութիւնը յաճախ կապուած է նրանց խօսքիմասային արժէքների հետ եւ պայմանաւորուած է նրանցով:

Հմմտ. նման եղեման դրախտին - 1. շատ գեղեցիկ (ած.), 2. շատ լաւ վիճակում (մկր.):

Իբրեւ զապառած խստահար - 1. խիստ դաժան (ած.), 2. դաժանաբար (մկր.):

11 Կապակցութեան ներսում բառերը կարող են ձեռք բերել դարձուածայնօրէն կապուած կամ ոչ ազատ իմաստներ:

իրքեւ գրախծնալ սգաւոր - 1. շատ տխուր (ած.), 2. տրտմելով (մկը.):

Ըստ նմանութեան մանրամաղ փոշոյ - 1. խիստ դանդաղ մաղող (ած.), 2. խիստ դանդաղ մաղելով (մկը.):

Նման Յուդայի - 1. դաւաճան (ած.), 2. դաւաճանաբար (մկը.):

Հնդհանրապէս բազմիմաստ դարձուածքներն իրենց իմաստային կառուցուածքով բարդ են, որով էլ պայմանաւորւում է նրանց գործածութիւնը տարբեր իմաստներով. վերջիններս էլ այդ կապակցութիւնները դարձնում են բազմիմաստ: Ըստ որում, մէկից աւելի իմաստներ ունեցող դարձուածքների, այդ թւում եւ ՀԴՄների տարբեր իմաստները դրսեւորւում են խօսքաշրում: շարահիւսական միջավայրում բազմիմաստ իւրաքանչիւր դարձուածք գործածուում է իր իմաստներից մէկով:

Հմմտ. իրքեւ գպատուական մարգարիտն // իրքեւ զմարգարիտն պատուական տարբերակային ՀԴՄի իմաստները եւ վերջիններիս իրացումները բնագրային հետեւեալ օրինակներում.

1. Խսկ զհոգեւորացն առաքինութիւն աստուածամէր սիրողացն մեծութիւն իրքեւ զմարգարիտն պատուական (Ագաթ., 6)' (շատ պատուական՝ թանկագիր):

2. Հասեալ գեղեցկագոյն իրքեւ գպատուական մարգարիտն (ն. առ., 9)' (չքնաղ, չնաշխարհիկ):

### Բ. Միջկապակցական իրողութիւններ

Այդօրինակ իմաստային յարաբերութիւններ են համատեղում մէկից աւելի ՀԴՄներ: Ըստ որում, վերջիններիս շրջանակներում ի յայտ են գալիս գերազանցապէս հոմանշային եւ հականշային յարաբերութիւններ:

#### 1. Հոմանիշ ՀԴՄներ

Այդօրինակ ՀԴՄները<sup>12</sup> դարձուածային զոյգեր կամ շարքեր են կազմում, որոնք դասակարգելում են ըստ տարբեր յատկանիշների:

12 Դարձուածային հոմանշութեան վերաբերեալ առաւել հանգամանօրէն տե՛ս ՍՈՒՔԻՍՍԵԱՆ, Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերէմում, Եր. համալս. հրտ., Երեւան 1971, 270:

Հոմանիշ ՀԴՄների դասակարգումն  
ըստ իմաստային մերձաւորութեան աստիճանի  
եւ ռեալան-գործառական տարրերութիւնների

**Հատ այս յատկանիշի, առանձնացւում են նոյնանիշներ եւ բուն հոմանիշներ կամ համանիշներ:**

1. Նոյնանիշ ՀԴՄներ. Նոյնանիշ ՀԴՄներն իմաստով լիովին համընկնում են.

դրանք միեւնոյն իմաստի կրողներն են եւ յաճախ նոյնանում են ՀԴՄների հոմանչային տարբերակների հետ, հմմտ.

սպիտակ որպէս զանան // զլոյս // զասր // ~ քան զկաք-ն (չափազանց սպիտակ)

տրտում // անմիթար մինչեւ ի մահ, կարեվէր մերձ ի մահ (չափազանց տխուր՝ անմիթար)

իբրեւ զմարգարիտն // քան զոսկի պատուական (շատ պատուական, թանկագին)

հակառակ որպէս սպիտակ թխոյ // քաղցր դառին (խիստ հակառակ, հակադիր)

կարմիր իբրեւ զարիւն // զրոց երոյ // զկեղեւ նոան (չափազանց կարմիր)

իբրեւ զարծուի // որպէս արագաքեւ հողմանման խոյանալ (ուժգին թափով խոյանալ)

քան զաւազ // իբրեւ զաստեղս բազմանալ (արագօրէն բազմանալ)

իբրեւ (զեզօր ինչ) գետ // զանձրեւ // զտեղատարափ (առատօրէն յորդելով՝ թափուելով)

պահել իբրեւ զմարգարիտ պատուական // զրիք ական (պահել-պահանել իբրեւ ամենաթանկ բան, աչքի լոյսի պէս) եւ այլն:

Հմմտ. Պահիցէ զբանս նորա՝ իբրեւ զմարգարիտ պատուական գտեալ (Աղաթ., 89); Պահեցեր զմեզ իբրեւ զրիք ական (Անդ, 107):

2. Բուն հոմանիշներ կամ համանիշ ՀԴՄներ. Դրանք արտայայտում են մերձաւոր նշանակութիւններ: Այդ կարգի հոմանչային ՀԴՄները կարող են դրսեւորել իմաստային աստիճանական, յուզարտայայտչական, ինչպէս նաև գործառական տարբերութիւններ: Այդօրինակ ՀԴՄները միշտ ունենում են տարբեր բառային կազմ:

**Հմմտ.** ընդհանուր իմաստով յատկանշուող հետեւեալ հոմանշային զոյգերը.

**«Շատ գեղեցիկ»** - գեղեցկագոյն քան զսիրամարգ, սբանչելի իրեւ զտեսիլ հրեշտակաց,

**«Շատ փոքր»** - քան զհատն մանանխոյ, քան զդրամ:

Հոմանիշ ՀԴՄների դասակարգումն ըստ ձեւաբանական արժեքի

Հոմանշային զոյգի կամ շարքի անդամները պէտք է միեւնոյն խօսքիմասային պատկանելութիւնն ունենան: Այս իմաստով ՀԴՄներում հանդիպում են ածականական, բայական եւ մակրայական հոմանշային երկանդամ եւ բազմանդամ շարքեր:

1. Ածականական հոմանիշ ՀԴՄներ. **Այսօրինակ ՀԴՄները պատկանում են ածականի քերականական կարգին՝ համախըմբուելով իրենց ընդհանրական յատկանշային իմաստով:**

**Հմմտ. ածականական ՀԴՄների հետեւեալ զոյգերը.**

հակառակ որպէս սպիտակ թիոյ // քաղցր դառին

(խիստ հակառակ, հակադիր)

քան զոսկի ընտիր, իրեւ զմարգարիտ պատուական

(խիստ ընտիր, պատուական)

սեաւ իրեւ զկապերտ այծեայ // զագուա (խիստ սեւ)

թեթեւ առաւել քան զպիգասոս // զիողմ (շատ թեթեւ)

տրտում // անմիջիքար մինչեւ ի մահ (չափազանց տխուր)

որպէս յորդահոսան բազմութիւնք ջրոց, որպէս գունակ Արածանւոյ (խիստ առաւ, յորդահոս)

իրեւ զիեառն բարձր, քան զաշտարակն Դաւթի (չափազանց բարձր):

**Ստորեւ բերուող հոմանշային շարքերում առկայ են երեքական ածականական ՀԴՄներ.**

Արեամբ չափ, ոգուվ չափ, մահու չափ (խիստ շատ)

լուսաւոր որպէս ական բիբ, անարատ ըստ մարդկանէ, մանուր որպէս զլոյս (շատ մաքուր, անբիծ)

կարմիր իրեւ զարիւն, իրեւ զկեղեւ նոան, իրեւ զրոց հրոյ (շատ վառ կարմիր)

քան զդրամ, քան զհատն մանանխոյ, իրեւ զփոշի մանր (շատ փոքր՝ մանր):

**Հմմտ.** նաեւ ածականական ՀԴՄների թէ՛ հոմանչային – տարբերակային, թէ՛ բուն հոմանչային հետեւեալ շարքերը.

ըստ նմանութեան կաթինն, իբրեւ զասր սպիտակ, իբրեւ զեղեամն ի վերայ երկրի, սպիտակ որպէս զգին, որպէս զլոյ (Հատ սպիտակ)

իբրեւ զշուշան, գեղեցկագոյն քան զփրամարգ, իբրեւ զանմարմինս, սբանչելի իբրեւ զտեսիլ հրեշտակաց (Խիստ գեղեցիկ, չնաշխարհիկ)

բազում քան զիեր զիխոյ, առատ քան զգինի, իբրեւ զաւագ ծովու անչափ, բազում իբրեւ զաստեղս (Խիստ շատ)

որպէս ծառ, իբրեւ զպարիսայ, պէս գունակ Տրդատայ, իբրեւ զվեմ հաստատուն, քաջ // արի քան զԱքիլեւս, ուժեղագոյն քան զչերակլէս, հզօր իբրեւ զկաղնի (Խիստ հզօր)

կարծրագոյն իբրու յականս // ի պողովատսն, խստացեալ իբրեւ զորամար, քան զգազան անզութ (Խիստ դաժան, անգութ)

քաղցր քան զիսրիսին մնեղու // զմեղը, իբրեւ զիու կնդրկի, քան զամենայն խունկս անուշութեան (Հատ քաղցր՝ անուշ) եւ այլն:

**Հմմտ.** Քաղցր էր ի ճաշակելիս խորհրդոց հոգեւոր եւ իմաստուն լսողաց … քան զիսրիսին մնեղու (Փարպ., 20): Քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղը բերանոյ իմոյ (Ագաթ., 268): Եւ հոտ հանդերձից քոց իբրեւ զիու կնդրկի (Երգ.):

2. Բայական հոմանիշ ՀԴՄներ. **Աղոթինակ ՀԴՄների զոյգի կամ շարքի գերադաս բոլոր անդամները պատկանում են բայի քերականական կարգին:**

**Հմմտ.** բայական ՀԴՄների զոյգերը.

իրաժարել իբրեւ ի պղծոյ, խորշել ի ճանապարհաց ումանց իբրեւ ի պղծութեանց (Խիստ խորշել)

որպէս փախստէից հետամուտ լինել(իմ), զիետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ (յամառօրէն հետապնդել)

օգնել որպէս եղբայր սիրելի, տալ թեւս որպէս զաղաւելոյ (Խիստ հոգատար լինել, ոգեւողել)

գալարել իբրեւ զօճ թունաւոր, գոչել իբրեւ զառիւծ զայրացեալ (Խիստ յուզուել՝ զայրանալ՝ փոթորկուել) եւ այլն:

**Հմմտ.** նաեւ բայական ՀԴՄների հետեւեալ շարքերը.

իրեւ զիտան ի բաց թողուլ, հատանել լնկենուլ իրեւ զիտան, իրեւ զաւելորդ ի բաց թքանել (*աւելորդ համարելով դէն նետել*)

սիրել զոք իրեւ զորդի, սիրել զլնկերն իրեւ զանձն քո, սիրել ըստ անձին, իրեւ զսիրելի որդի գգուել, պահել իրեւ զմարգարիտ պատուական // զրիք ական, սիրել զոմանս իրեւ զուրք ծնողս, ոգուվ չափ սիրել (*չափազանց շատ սիրել, պահել-պահպանել*)

խօսել ընդ ոմանս իրեւ զտղայս, պատրել իրեւ զմանուկ մի տղայ, իրեւ հաւու խաղալ նովաւ (*խիստ արհամարհալից խօսել՝ վարուել մէկի հետ*)

իրեւ զծուխ պակասել, իրեւ զսառն ճմերայնոյ հալել, փշրել որպէս զանօթ բրտի, իրեւ զկաւելին անօթ փշրել, որպէս հեղեղաւ չնջեալ մաքրել (*արագօրէն սպառուել՝ անհետանալ*)

Քան զփուշ եւս չար կտտել, նման բոցոյ տոչորել, բանիւք իւրեանց խոցել որպէս սրով, խոցուել ի մահ (*սաստիկ վիրաւորել՝ ցաւ պատճառել, խոցուել*) եւ այլն:

**Հմմտ.** *Մերթ շանթէր գալարէր իրեւ զօձ թունաւոր, մերթ պարզէր գոչէր իրեւ զափիւծ զայրացեալ* (*Եղ., 16.*)

3. Մակրայական հոմանիշ ՀԴՄներ. *Այդօրինակ կապակցութիւնները պատկանում են մակրայի քերականական կարգին:*

**Հմմտ.** *Հոմանշային հետեւեալ զոյգերը.*

որպէս որդին ուրացող, նման Յուդայ (*դաւաճանաբար*)

իրեւ զջորիս, իրեւ մնդուս (*շատ - շատ աշխատելով, տքնելով*)

որպէս ծնող, նման Աստուծոյ (*օգնելով, փայփայելով, փրկելով*)

ըստ կամս անձանց իւրեանց, ըստ կամացն (*ուզածի պէս*)

իրեւ զարծարք ի բովս, իրեւ զանագ ի մէջ հրոյ (*խիստ թրծուելով, փորձառութիւն ձեռք բերելով*) եւ այլն:

*Հանդիպում են նաեւ մակրային յարաբերակից ՀԴՄների հոմանշային շարքեր.*

ըստ օրինակի երիտասարդի, իրեւ զմանուկ, իրեւ զտկար, իրեւ զանգօթ տղայ (*խիստ անօգնական վիճակում*)

իրեւ նրագ, որպէս ջահս վառեալս, զօր օրինակ որպէս լոյս առ խաւար (*չափազանց շատ օգնելով, սատարելով*)

որպէս զաւագակն, իբրեւ զօն, իբրեւ զշուն կատաղեալ, իբրեւ զդեւս, օրինակ իմն չարագոյն գազանի իմն, անողորմաքար որպէս գազանք, որպէս զբարբարոսս (*խիստ դաժանաբար*)

իբրեւ զնահատակ առաքինի, իբրեւ զառլրը, ըստ մարգարեկցն // առաքելոցն նմանութեան, իբրեւ զիրեշտակս (*առաքինաբար, սրբորէն*)

ըստ նմանութեան արագաքեւ արծուոյ, արագապէս որպէս թոշունք, արագագոյն քան զարեգակն, արագ քան զմիտս (*չափազանց արագ*) եւ այլն:

**Հմմտ.** Հնարեցան իբրեւ զարծար ի բովս (*Ագաթ.*, 324): Իբրեւ զանագ ի մէջ իրոյ ծախեալ սպառեցաւ (*Անդ.*):

### ՀԴՄԵՐԻ հոմանշյին շարքեր

Հնդհանրապէս հոմանշյին շարքը ներառում է առնուազն երեք անդամ: Հստ այդմ, հոմանշյին շարքի անդամներից առաջինը իշխող անդամ է՝ ոճականօրէն չէզոք:

ՀԴՄԵՐԻ պարագայում հոմանշյին շարքը կարող է տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչեւ տասնմէկ, երբեմն աւելի անդամներ:

**Հմմտ.** ՀԴՄԵՐԻ հոմանշյին հետեւեալ եռանդամ շարքը. տրտում // անմիջիքար մինչեւ ի մահ, կարեվէր մերձ ի մահ (*չափազանց տիսուր*),

Ստորեւ բերուող հոմանշյին շարքը ներառում է վեց ՀԴՄ. պատուել որպէս զիշխան, պաշտել որպէս զկայսր, ծառայել իբրեւ Աստուծոյ, պատուել իբրեւ Աստուած, երկրպագել իբրեւ Տեառն, իբրեւ Աստուած փառաւորել (*խիստ պաշտել*):

Հոմանշյին բազմանդամ շարք են կազմում «անակնկալի եկած» ընդհանուր իմաստով հետեւեալ ՀԴՄԵՐԸ. որպէս ի ֆնոյ արթնացեալ, որպէս ի խաւարէն զերծեալ, իբրեւ զծով ի սաստիկ հողմոյ յուզեալ, որպէս հողմավար, իբրեւ խաշինս ցրուեալս եւ վայրատեալս, իբրեւ զարհուրեալ, որպէս շանբահար - 7 ՀԴՄ:

Հետեւեալ հոմանշյին շարքը ներառում է 8 ՀԴՄ, որոնք ունեն «խիստ վատ՝ անելանելի վիճակում» ընդհանուր իմաստը. հեղգագոյն իմն պէս, որպէս ի կարկտոյ հարեալք, իբրեւ զթախծեալ սգաւոր, զերդ ի սգի, իբրեւ զմահապարտ, օրինակ իմն կիսամահ, որպէս կիսամեռ, իբրեւ զմեռեալ:

«Շատ արագ, անսպասելիօրէն» ընդհանուր իմաստն ունեն հետեւեալ հոմանշային ՀԴՄները. նման յորդառատ անձրեւի, որպէս անձրեւ սաստիկ, որպէս յորդահոսանք բազմութիւնն ջրոց, իբրեւ զիեղեղատ արձակեալ, իբրեւ զտեղատարափ, իբրեւ զիողմ սաստիկ, իբրեւ զփայլակն անկեալ յերկնից, որպէս հուր ինչ մոլեկան հրդեհի, իբրեւ զբարելոնի հնոցին բոց - 9 ՀԴՄ:

Ամենաշատ հոմանշային ՀԴՄներ է ներառում «սաստիկ թափուել՝ հոսել, յորդել» ընդհանուր իմաստով հետեւեալ շարքը. իբրեւ զջուր հոսել, իբրեւ յաղբերէ դիմել, իջանել իբրեւ զանձրեւ ի վերայ սիզոյ, իջանել իբրեւ զտեղատարափ ի վերայ խոտոյ, իբրեւ զիզօր ինչ գետ ծաւալել, ըստ նմանութեան ամպոց հոսել, յորդել իբրեւ զիեղեղա անհուն, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղել, արձակել իբրեւ զիեղեղատ սաստիկ, գալ իբրեւ ի սաստիկ հողմոյ - 10 ՀԴՄ:

Ինչպէս նշել ենք, հոմանշային շարքի անդամները բնութագրում են ընդհանուր բառակապակցական իմաստով:

Քանի զասորի յետին (//անպիտան), պիղծ իբրեւ զեսաւ, լիրք քան զամննայն շուն հոմանշային ՀԴՄներն ունեն «շատ ստոր, անպիտան» ընդհանուր իմաստը:

Որպէս զպասիեալ ծարաւիս, իբրեւ ի քանձամած խաւարի, իբրեւ զկենդանի ի գերեզմանի ՀԴՄներն ունեն «շատ նեղ՝ անելանի վիճակում» ընդհանուր իմաստը:

«Սաստիկ յորդել» ընդհանուր իմաստով է հանդէս գալիս հետեւեալ ՀԴՄների հոմանշային շարքը. իջանել իբրեւ զցող, իբրեւ զջուր հոսել, իբրեւ յաղբերէ դիմել, իբրեւ զիզօր ինչ գետ ծաւալել, յորդել իբրեւ զիեղեղա անհուն:

**Այս կարգի ՀԴՄները դրսեւորում են իմաստային աստիճանական տարրերութիւններ:**

**Հմմտ.** Իչցէ իբրեւ զցող՝ անոտնաձայն լրութեամբ (ԳԲԲ, 51). Իբրեւ զջուր հոսել (Ագաթ., 69). **Շատախօսութեան հոսանք** իբրեւ յաղբերէ դիմեն (Խոր., 249). **Զնոսա էր տեսանել** իբրեւ զիզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ (Անդ, 304). Յորդեսցէ արդարութիւն իբրեւ զիեղեղա անհուն (Ամովս է., 24).

**ՀԴՄների որոշ հոմանշային շարքեր ի յայտ են բերում** յուզարտայայտչական տարրերութիւններ, **ինչպէս**

ա) անարատ ըստ մարդկանէ, միամիտ(ք) իրեւ զաղաւնի(ս), քան զիրեշտակս, իրեւ զանմարմինս, քան զեզն (//զէշ) պակասամտագոյն (խիստ միամիտ, արդար, անապական, պարզամիտ),

բ) իրեւ զմարդիկ մեռանել, ըստ օրինակի տեառն մերոյ մեռանել, իրեւ զշուն մեռանել (մահկանացուն կնքել, մեռնել, սատկել),

գ) խօսել ընդ ումանս իրեւ գտղայս, իրեւ հաւու խաղալ նովաւ (մոլորեցնել, ծաղրել),

դ) իրեւ զծառայ, իրեւ զգառն, որպէս զոչխար, իրեւ զանխօս անասունս (ծառայելով, ենթարկուելով, սորկամտօրէն հնագանդուելով):

**Հմմտ.** Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իրեւ զծառայ... եւ մերթ երթայ զողէ իրեւ զարհուրեալ (Եզն., 14-15): Եկիր ի սպանումն իրեւ զգառն (Ագաթ., 52): Համարեցաք որպէս զոչխար ի սպանդ (Փարպ., 91): Իրեւ զանխօս անասունս ապականեսցին (Բ. Պետ. Բ., 12):

Ոնական-գործառական տարրերութիւններ են դրսեւորում հետեւեալ ՀԴՄների հոմանշային շարքերը:

ա) քաջ (// արի) քան զԱքիլես, ուժեղագոյն քան զՀերակլէս (զրք.), հզօր իրեւ զկաղնի, իրեւ զվէմ հաստատուն (Համագործած.) - խիստ ուժեղ, հզօր,

բ) պիղծ իրեւ զնսաւ (գրք.), լիրք քան զամենայն շուն (խսկց.) - խիստ յնտին, անպիտան, ստոր,

գ) պահել իրեւ զմարգարիտ պատուական (գրք.), սիրել ըստ անձին (Համագործած.) - որպէս ամենաթանկ բան սիրել՝ պահել՝ փայտայել,

դ) գրել իրեւ առ ատելիս եւ անպիտան (Համագործած.), իրեւ զշուն անպիտան ընդ վայր հաջել (խսկց.) - զրպարտել, բանսարկել, չարախոսել,

է) իրեւ զմեղուս // նման մեղուի (Համագործած.), իրեւ զէշ // զզորի (խսկց.) - խիստ շատ աշխատելով:

**Հմմտ.** Նման մեղուի բերելով յամենայն կողմանց՝ բաւական լինէի (Փարպ., 197): Իրեւ զէշ եւ իրեւ զզորի այնպէս ստանձնեալ բեռինս պահեցեր (Ագաթ., 32):

### Հոմանիշ եւ բազմիմաստ ՀԴՄներ

**Ընդհանրապէս որքան իմաստներ ունի տուեալ դարձուածքը, այնքան հոմանշային (եւ հականշային) շարքեր կարող է կազմել:**

**ՀԴՄների հոմանշութիւնը եւ բազմիմաստութիւնը հարկ է մէկ միասնութեան մէջ դիտարկել:**

**Այսպէս, խոզի նման ՀԴՄն ունի՝ 1. շատ կեղտոտ, 2. խիստ պիղծ, եղկելի իմաստները։ Այս ՀԴՄն իր երկրորդ իմաստով է մտնում հոմանշային յարաբերութիւնների մէջ. քան զատրի յետին // անպիտան, պիղծ քան զնսաւ, վատթարագոյն քան զշուն, լիրք քան զամենայն շուն։**

**Հմմտ. նաեւ քան զիրեշտակս (1. շատ գեղեցիկ, 2. շատ բարի), նման եղեման դրախտին (1. խիստ գեղեցիկ, 2. շատ լաւ վիճակում):**

Քան զիրեշտակս, նման եղեման դրախտին ՀԴՄները, իրենց առաջին իմաստով մտնելով հոմանշային յարաբերութեան մէջ, ներառուում են հոմանշային հետեւեալ շարքում։ իբրեւ զշուշան, զօրէն վարդի, գեղեցկագոյն քան զսիրամարգ, քան զիրեշտակս, իբրեւ զանմարմինս, սբանչելի իբրեւ զտեսիլ հրեշտակաց, նման եղեման դրախտին։

**Իբրեւ զշանթահար ՀԴՄն ունի՝ 1. յանկարծակի, անսպասելի կերպով, 2. անակնկալի եկած, սարսափահար վիճակում իմաստները։**

**Իր առաջին իմաստով այն մտնում է հոմանշային հետեւեալ շարքի մէջ։ իբրեւ զփայլակն (// ~ անկեալ յերկնից), իբրեւ զամպ քոռուցեալ, իբրեւ զիեղեղատ արձակեալ, իբրեւ զանձրեւ // զտեղատարափ, իբրեւ հուր ինչ մոլեկան հրդեհի, իբրեւ զբարելոնի հնոցին բոց, իբրեւ զշանթահար։**

**Այդ նոյն ՀԴՄն իր երկրորդ (անակնկալի եկած) իմաստով ներառուում է հետեւեալ հոմանշային շարքում։ որպէս ի քնոյ արթնացեալ, իբրեւ ի քնոյ ընդուստուցեալ, որպէս ի կարկտոյ հարեալք, իբրեւ ի խաւարէն զերծեալ, իբրեւ զխաշինս ցրուեալս եւ վայրատեալս, իբրեւ ծով ի սաստիկ հողմոյ յուզեալ, իբրեւ հողմափար, իբրեւ զարհուրեալ, իբրեւ զշանթահար։**

## 2. Հականիշ ՀԴՄներ

Այդօրինակ ՀԴՄները<sup>13</sup> ներառւում են միեւնոյն խմբում՝ ըստ խօսքիմասային ընդհանուր արժէքի եւ բառիմաստային հակադրութիւնների։ Դիտարկենք հետեւեալ հականիշ ՀԴՄների իմաստները։

իբրեւ կանխագէտ (*իրազեկ լինելով*) – իբրեւ զանգէտս (առանց իմանալու, անիրազեկ կերպով)

որպէս յորձան ինչ սաստիկ (բուռն կերպով, արագ) – որպէս կիսամնոք (շատ դանդաղ, թոյլ կերպով)

մաքուր որպէս զլոյս (շատ մաքուր) – խոզի նման (շատ փնթի՛ կեղտուոտ)

իբրեւ զկանթեղս անշիշանելի վառեալ բորբոքիմ (իսիստ կարմրել՝ բորբոքուել) – իբրեւ զգոյն դալկան դեղնացեալ շրջիմ (իսիստ դեղնել՝ սկրթնել)

իբրեւ զգիւն սպիտակեմ (իսիստ սպիտակել) – իբրեւ զածուխ սեւանամ (իսիստ սեւանալ) եւ այլն։

## Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևարանական արժեքի

Լստ այս սկզբունքի, գրաբարում հիմնականում առանձնացւում են ածականական, բայական եւ մակրայական հականշային ՀԴՄներ։

### ա) Ածականի արժեքով հականիշ ՀԴՄներ

Այդօրինակ հականշային ՀԴՄները պատկանում են ածականի քերականական կարգին՝ ցոյց տալով առարկայի յատկանիշ՝ իմաստային ներհակութեամբ։ Հմմտ։

դառնագոյն քան զլեղի (շատ դառն) – քաղցր քան զմեղը (շատ քաղցր)

պատուական քան զուկի (իսիստ պատուական) – վատքարագոյն քան զշուն (իսիստ պատուազուրկ՝ արգահատելի)

<sup>13</sup> Ընդհանրապէս հականշային ԴՄների մասին հանգամանօրէն տե՛ս ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա. Գ., Հայոց լեզու, բառ եւ խօսք, «Լոյս» հրտ., Երևան 1978, 162:

սպիտակ որպէս գձիւն // միքրեւ զեղեամն ի վերայ երկրի,  
իբրեւ զասը // զձիւն սպիտակ (չափազանց սպիտակ, ծիւնաճեր-  
մակ) – սեւ որպէս զածուխ, սեաւ իբրեւ զագուա // զկապերտ այ-  
ծեայ (չափազանց սեւ)

պիղծ իբրեւ զնսաւ (չափազանց պիղծ) – մաքուր որպէս  
զլոյ (չափազանց մաքուր, անթասիր, անարատ)

խորագէտ իբրեւ զօն (չափազանց իմաստուն) – քան զէշ //  
զեզն պակասամտագոյն (չափազանց յիմար, պարզամիտ) եւ այլն:

**Հմմտ.** Եղերուք ... խորագէտք իբրեւ զօնս (Ագաթ., 306).  
Քան զեզն եւ զէշ եւս պակասամտագոյն գտայք (ն. տ., 307):

### բ) Բայի արժեքով հականիշ ՀԴՄՑեր

**Այդ կարգի հականիշներն ունեն խօսքիմասսային միեւնոյն  
պատկանելութիւնը.** ցոյց են տալիս գործողութիւն, եղելութիւն,  
վիճակ՝ հանդէս գալով իմաստային բեւեռայնութեամբ: Հմմտ.

հասանել ի վերայ իբրեւ զխոյանալ արծուոյ (յամառօրէն հե-  
տամտել, յարձակուել մէկի // մի բանի վրայ) – խորշել իբրեւ ի  
պղծութեանց (խիստ խուսափել, փախչել)

իբրեւ զսիրելի որդի գգուել (սաստիկ սիրել՝ նուիրուել) –  
իբրեւ զանհաւատ առ ոտն հարկանել (սաստիկ արհամարհել,  
քամահրել)

զիետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ (խիստ հե-  
տապնդել) – երաժարել իբրեւ ի պղծոյ (խիստ խորշել)

իբրեւ զկանթեղ անշիշանելի վառեալ բռբռնել(իմ) (խիստ  
կարմրել, բոցավառուել) – իբրեւ զգոյն դական դեղնացեալ շրջել  
(խիստ գունատուել՝ դեղնել)

իբրեւ զծուխ պակասել (խիստ արագ եւ աննկատելի սպա-  
ռուել) – իբրեւ զաստեղս բազմանալ (խիստ արագ բազմանալ)

պահել իբրեւ զրիք ական (իբրեւ ամենաթանկ բան պահել-  
պահպանել) – իբրեւ զաւելորդ ի բաց թքանել (խիստ արհամար-  
հանքով դէն նետել) եւ այլն:

**Հմմտ.** Պահեցեր զմեզ իբրեւ զրիք ական (Ագաթ., 107).  
Քանզի առաջին անկեալ սերմնն զայլսն իբրեւ զաւելորդս ի բաց  
թքանել (Եզն., 133):

գ) Մակրայի արժեքով հականիշ ՀԴՄներ

Այդպիսի ՀԴՄները համախմբւում են միեւնոյն շարքում՝ ցոյց տալով գործողութեան կամ յատկանիշի յատկանիշ՝ իմաստային ներհակութեամբ։ Հմմտ։

իրեւ զանգօր տղայ (չափազանց թոյլ՝ անօդնական վիճակում, անզօր կերպով) – իրեւ զիհւպատեանն Հռովմայեցւոց (չափազանց զօրեղ կերպով, հզօրաբար)

իրեւ դժոխվ (խիստ դժոխային՝ սարսափելի կերպով) – նման Եղեման դրախտին (խիստ երանելի՝ դրախտային կերպով)

որպէս նապատակ (խիստ վախենալով) – նման առիւծու (խիստ անվախ կերպով, խիզախաբար)

որպէս կենդանի ի գերեզմանի (խիստ վատ՝ անելանելի վիճակում) – զօրեն վարդի (խիստ լաւ՝ ապահով՝ բարւոք վիճակում):

ըստ մարգարէիցն // առաքելոցն նմանութեան (գթասրտորէն) – իրեւ զգազանս վայրենիս // արիւնախանձս (դաժանաբար) եւ այլն։

Հմմտ։ Եւ ինքն ըստ մարգարէիցն եւ կամ ըստ առաքելոցն նմանութեան զղողորմածութիւնս ցուցանէր (Բուզ., 66). Իրեւ զգազանս վայրենիս արիւնախանձս ուսուցին զնոսա (Եղ., 161).

Հականիշ ՀԴՄների դասակարգումն ըստ կազմութեան  
եւ իմաստային առանձնայատկութիւնների

ՀԴՄներում հականչութիւն արտայայտելու եղանակներն ու միջոցները տարբեր են։ ՀԴՄների իմաստային հակադրութիւնը կարող է դրսեւորուել։

ա) Գերադաս անդամների միջոցով.

սպիտակ որպէս զմիւն (չատ սպիտակ) – սեւ որպէս զածուխ // զագրաւ (չատ սեւ)

իրաժարել իրեւ ի պղծոյ (ասատիկ խորշել՝ հրաժարուել) – ընկալել բան զնսի ընտիր (չատ-չատ ձգտել՝ ընդունել)

պիղծ իրեւ զնսաւ (չափազանց պիղծ) – մաքուր որպէս զլոյս (չափազանց մաքուր, անբասիր)

իրեւ զաստեղս բազմանալ (չատ արագ բազմանալ) – իրեւ զծուխ պակասել (չատ արագ՝ աննկատելի պակասել) եւ այլն։

**Հմմտ.** Պաշտամունք սրբութեան իբրև զատեղս բազմասցին (*Ագաթ.*, 390): Իբրև զծուխ պակասեցան (*Անդ.*, 406):

*բ) Ստորադաս բաղադրիչներով:*

այդօրինակ հականշային ՀԴՄներ հանդիպում են հիմնականում մակըբայական կապակցութիւնների շրջանակներում: Այս դէպքում իմաստային հակադրութիւնն արտայայտում է «նախադրութիւն + խնդիր» - «նախադրութիւն + խնդիր» (միագագաթ) կապակցութիւնների միջոցով:

*Հմմտ.*

իբրև տէր (*տիրաբար, ենթարկելով*) - իբրև ծառայ (*ստրկամտօրէն, հնազանդուելով*)

իբրև դժոխվ (*շատ դաժան՝ դժոխային վիճակում*) - նման նդեման դրախտին (*շատ երանելի՝ դրախտային վիճակում*)

իբրև ի թշնամւոյ վերայ (*իսիստ թշնամաբար*) - իբրև ընկերի (*իսիստ մտերմաբար*) եւ այլն:

**Հմմտ.** Իբրև ի թշնամւոյ վերայ խոստանայր վրէժ խնդրել (*Ագաթ.*, 20): Ետուր ինձ պատախանի իբրև ընկերի (*ն. ա.*, 39):

*գ) Միաժամանակ եւ՝ գերադաս, եւ՝ ստորադաս բաղադրիչներով:*

այդօրինակ հականիշները հազուառէակ են ՀԴՄների շրջանակներում:

դառնագոյն քան զլեղի (*շատ դառը*) - քաղցր քան զմեղը (*շատ քաղցր*)

իբրև զծիւն սպիտակել (*իսիստ սպիտակել*) - իբրև զծուխ սեւանալ (*իսիստ սեւանալ*)

խորագէտք իբրև զօն (*շատ խորամանկ*) - միամիտք իբրև զաղաւեիս (*շատ միամիտ*) եւ այլն:

**Հմմտ.** Եղերուք խորագէտք իբրև զօն (*Ագաթ.*, 306): Եղերուք, ասէ, միամիտք իբրև զաղաւեիս (*Անդ.*, 307):

*դ) Ընդհանուր իմաստներով, անկախ բառային հակադրութիւններից:*

այդ կարգի հականիշ ՀԴՄները գերակշիռ մեծամասնութիւն են կազմում: Նրանցում առաջնութիւն է տրուում ոչ թէ բաղադրիչների իմաստային ներհակութիւնը, այլ ընդհանուր իմաստային բեւեռայնութիւնը: **Հմմտ.**

իրեւ զանգօր տղայ (խիստ անզօր՝ անօգնական կերպով) – իրեւ գիհւպատեանն Հոռվմայեցոց (խիստ հզօր կերպով)

ըստ առաքելոցն նմանութեան (չափազանց գթասրտօրէն) – օրինակ իմն չափագոյն գազանի ինչ (խիստ դաժանաբար, անգթօրէն)

որպէս կենդանի ի գերեզմանի (խիստ վաստվիճակում) – զօրէն վարդի (խիստ լաւ վիճակում)

որպէս անխօս անասունս (խիստ հնագանդուելով, ծառայամտօրէն) – որպէս ի քնոյ արբենացեալք (յանկարծակի ըմբռստանալով)

երկրպագել իրեւ Տեառն (խիստ պատկառել՝ պաշտել) – իրեւ հաւու խաղալ նովալ (խիստ ծաղրել՝ անարգել)

իրեւ զջուրս հեղեղաց բազմանալ (արագօրէն բազմանալ) – իրեւ զձիւն հալել (արագօրէն սպառուել՝ քչանալ՝ պակասել)

բան զիուշ եւս չար կտտել (խիստ խոցել, ցաւ պատճառել) – տալ թես որպէս զաղաւելոյ (խիստ ոգեւորել, ուրախութիւն պարգեւել)

պատուական բան զրսկի // ~ իրեւ զմարգարիտն (խիստ պատուական՝ յարգարժան) – լիրը բան զամենայն շուն (խիստ ստոր՝ արգահատելի) եւ այլն:

Հմմտ. Իսկ զհոգեւորացն առաքինութիւնների՝ ՀԴՄներում աստուածասէր սիրողացն մեծութիւն իրեւ զմարգարիտն պատուական (Ագաթ., 6). Այլ գիտասցիր, զի լիրը բան զամենայն շուն իցես դու (Ղեւ., 38):

*Հստ իմաստային առանձնայատկութիւնների՝ ՀԴՄներում առանձնացւում են՝*

ա) Լիարժէք հականիշներ, որոնք ունեն բառային իմաստների ներհակութիւն, առարկայական միանման յարաբերակցութիւն, ոճական նոյն առանձնայատկութիւնը.

իրեւ զձիւն սպիտակ – սեւ որպէս զածուխ

դառնագոյն բան զիեղի – բաղցը բան զմեղը

իրեւ տէր – իրեւ ծառայ

իրեւ ի քշնամւոյ վերայ – իրեւ ընկերի

իրեւ դժոխք – նման նդեման դրախտին

որպէս նապաստակ – նման առիւծու

իրրեւ գծիւն սպիտակել – իրրեւ զածուխ սեւանալ

իրրեւ ի թանձրամած խաւարի – որպէս ի խաւարէն զերծեալք ի լոյս եւ այլն:

**Հմմտ.** Այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իրրեւ ի թանձրամած խաւարի եւ ոգիքն արգելեալք ի մարմնի իրրեւ զկենդանի ի գերեզմանի (Ծղ., I յեղ.): Որպէս ի խաւարէն զերծեալք ի լոյս՝ խնդային (Փարպ., 16):

բ) Ոչ լիարժէք հականիշներ, որոնք վերը նշուած կողմերից որեւէ մէկով տարբերութիւն են ցուցաբերում:

օրինակ իմն թագաւորական պատիւ – պիոծ գազանաց օրինակ

թանձիք իւրեանց խոցել որպէս սրով – տալ թեւս որպէս եղբայր սիրելի

իրրեւ զկանքեղ անշիշանելի վառեալ բորբոքնել – իրրեւ զգոյն դալկան դեղնացեալ շրջել

նման դեղոց մահու – նման բաղցրութեան մնդու եւ այլն:

**Հմմտ.** Զիսաբէական զեպիսկոպոսութիւնս նման դեղոց մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին (Փարպ., 202): Որոյ բանքն նման բաղցրութեան մնդու բղխէին ի բերանոյ արդարոյն (Անդ., 70):

### Հականիշ եւ բազմիմաստ ՀԴՄներ

ՀԴՄների հականշութիւնն ու բազմիմաստութիւնը որոշակի ընդհանրութիւններ ունեն: Միեւնոյն բազմիմաստ ՀԴՄ-ն այլ ՀԴՄների հետ հականշային յարաբերութիւնների մէջ է մտնում իր իմաստներից որեւէ մէկով:

**Հմմտ.** Խոզի նման ՀԴՄն բազմիմաստ է, ունի՝ 1. «շատ կեղտոտ», 2. «շատ պիղծ» իմաստները, որոնցով էլ հականշային զոյգեր է կազմում. 1. խոզի նման - պայծառագոյն որպէս զլոյս, 2. խոզի նման - անարատ ըստ մարդկանել:

Քան զիրեշտակս ՀԴՄն ունի՝ 1. «շատ գեղեցիկ», 2. «շատ բարի» իմաստները: Այն հականշային զոյգ է կազմում չար բան զբոյնս իծից ՀԴՄի հետ իր երկրորդ իմաստով:

Նման եղեմական դրախտին ՀԴՄն ունի՝ 1. «շատ գեղեցիկ» (ած.), 2. «շատ լաւ վիճակում» (մկր.) իմաստները: Այն հական-

շային յարաբերութեան մէջ է մտնում իբրեւ դժոխք ՀԴՄի հետ իր երկրորդ իմաստով:

Օրինակ իմն կիսամահ ՀԴՄն ունի՝ 1. «Հատ դանդաղ», 2. «Հատ տխուր, յուսահատ» իմաստները. 1. օրինակ իմն կիսամահ - իբրեւ զիայլակն, 2. օրինակ իմն կիսամահ – իբրեւ զգուարթուն:

**ՀԴՄների հականշութեան դրսեւորումները**

ՀԴՄների միջեւ հականշութիւնը տարբեր դրսեւորումներ ունի, որ պայմանաւորուած է հականշային եզրերի կառուցուածքային կամ քանակային արտայայտութեամբ։ Տուեալ դէպքում գրաբարում հականշութիւնն արտայայտում է երեք ձեւով։ մի դէպքում այն դրսեւորում է ՀԴՄների զոյգի միջեւ (հականշութեան եզրերը ներհակ իմաստներով կապակցութիւններ են), երկրորդ դէպքում ՀԴՄն իմաստային հակաղըրութիւն է կազմում ՀԴՄների զոյգի հետ, երրորդ դէպքում առկայ են հոմանչային շարքեր, որոնք միմեանց նկատմամբ ցուցաբերում են հականշային յարաբերութիւն։

Դիտարկենք հականշային յարաբերութիւնների այս կարգի դրսեւորումները գրաբարի ՀԴՄների հարթութեան վրայ։

ա) Հականշութիւն ՀԴՄների (զոյգի) միջեւ

Այսպիսի հականիշները, բնականաբար, ունեն միեւնոյն խօսքիմաստային արժեքը. տուեալ դէպքում ՀԴՄների ձեւաբանական արժեքների առանձնացում չենք կատարի, այլ ցոյց կը տանք դրանց իմաստային ներհակութիւնը։ Հմմտ.

իբրեւ զբախծեալ սգաւոր (Հատ տխուր) – իբրեւ զգուարթուն (Հատ անհոգ՝ ուրախ)

իբրեւ գձիւն սպիտակել (Խիստ սպիտակել) – իբրեւ գածուխ սեւանալ (Խիստ սեւանալ)

իբրեւ տէր (Խիստ տիրաբար, իշխելով, ենթարկելով) – իբրեւ զծառայ (Խիստ խոնարհաբար, ստրկամտօրէն):

բ) Հականշութիւն ՀԴՄների զոյգի հետ

Որեւէ ՀԴՄի հետ հականշային յարաբերութիւն կարող է կազմել իմաստով նրան ներհակ ՀԴՄների զոյգ, որի բաղադրիչ-

**Ները (ՀԴՄները) միմեանց նկատմամբ ունեն հոմանշային յարաբերութիւն։ Հմմտ։**

իբրեւ ամոլք հաւանի եւ հաւասարք (իսիստ ներդաշնակ՝ հակամէտ) – հակառակ որպէս սպիտակ թխոյ // հակառակ որպէս քաղցր դառին (իսիստ ներհակ՝ հակառակ)

իբրեւ զգազանս վայրեթիս (վայրենաբար, հրէշաբար, դաժանօրէն) - ըստ մարգարէիցն նմանութեան // ըստ առաքելոցն նմանութեան (մարգարէաբար, սրբօրէն, գթասրտօրէն)

իսուել ընդ ոմանս իբրեւ ընդ տղայս (արհամարհել, նուաստացնել) - երկրպագել իբրեւ Տեառն // պատուել ոք իբրեւ զԱսոնւած (մեծարել, երկրպագել):

#### գ) Հականշութիւն ՀԴՄների շարքերի միջեւ

Հոմանշային յարաբերութիւն արտայայտող ՀԴՄների շարքը, որ բնութագրուում է իմաստային որոշակի ընդհանրութեամբ, կարող է իմաստային հակադրութիւն կազմել մէկ այլ հոմանշային շարքի հետ. այս դէպքում հականշութիւնն արտայայտուում է հոմանշային տարբեր շարքերի միջեւ։ Հմմտ։

իբրեւ զասր սպիտակ // իբրեւ զաին սպիտակ // սպիտակ իբրեւ զեղեան ի վերայ երկրի // ըստ նմանութեան կաթինն (չափազանց սպիտակ) – սեւ որպէս զածուխ // սեւ որպէս զագուռ // սեւ որպէս զկապերտ այծեայ (չափազանց սեւ):

Պիղծ իբրեւ զեսաւ // լիբր քան զամենայն շուն // չար քան զբութիւն իթից (սաստիկ պիղծ՝ չար) – մաքուր որպէս զլոյս // լուսաւոր որպէս ական թիր // պայծառագոյն քան զլոյս (մաքուր, լուսաւոր):

Ըստ առաքելոցն նմանութեան // ըստ մարգարէիցն նմանութեան (գթասրտութեամբ, խոհեմաբար) – օրինակ իմն չարագոյն գազանի ինչ // նման Յուդայի // որպէս զորդին ուրացող (դաժանաբար, ուրանալով):

Զօրէն որպէս վարակեալ ինչ շղթայիւք // որպէս ոչխար // որպէս զծառայ // որպէս անասունս // իբրեւ ի թանձրամած խաւարի // իբրեւ զկենդանի ի զերեզմանի (գլխահակ, աշխարհից կտրուած) – որպէս ի քնոյ արքնացեալ // որպէս ի քնոյ ընդոսուցեալ // որպէս ի խաւարէն զերծեալք // որպէս շանթահար // որպէս այսահար (ըմբոստ, յանկարծակի, միանգամից):

Պահել իրեւ զմարգարիտ պատուական // ամփոփել իրեւ զցորեան ի շտեմարանս // պահել իրեւ զրիթ ական (խնամել, արժեւորել) - հրաժարել իրեւ ի պղծոյ // իրեւ զաւելորդ ի բաց թէանելի // իրեւ զիստան ի բաց թռորլ // հատանել ընկենուլ իրեւ զիստան (հրաժարուել, դէն նետել):

Իրեւ զաստեղս բազմանալ // իրեւ զգեստ հեղեղաց բազմանալ // իրեւ զջուրս հեղեղաց բազմանալ (բազմանալ, աելանալ) - իրեւ զծուխ պակասել // իրեւ զգիւն հալել (պակասել, նուազել):

Բանիք իրենաց խոցել որպէս սրով // քան զփուշ եւս չար կտուել // խոցունել ի մահ (խօսքերով վիրաւորել՝ խոցել) - տալ թեւս որպէս զաղանեւոյ // օգնել որպէս եղբայր սիրելի (սփոփել, օգնել) եւ այլն:

Ինչպէս երեւում է վերոբերեալ օրինակներից, գրաբարում չափազանց կենառունակ են հականշային այն դրսեւորումները, որոնք գոյութիւն ունեն ՀԴՄների հոմանշային շարքերի միջեւ: Դա միւս կողմից խօսում է այն իրողութեան մասին, որ գրաբարում կենառունակ են նաեւ ՀԴՄների հոմանշային շարքերը, որոնք որոշակի դեր ունեն լեզուի պատկերաւորման համակարգի դրսեւորումների համատեքստում:

### Այսպէս՝

1. ՀԴՄները պատկերաւորութեան հիման վրայ առաջացած երկանդամ (ծաւալումով կամ առանց ծաւալման) ստորագասական կապակցութիւններ են:

2. Այդօրինակ կապակցութիւնների ձեւաւորմանը մասնակցում են իրը // իրեւ, որպէս, քան, նման, գունակ // որպէս գունակ, աւրինակ // աւրինակ իմն, զօրէն, զերդ, զոյգ, չափ, որչափ, միթչեւ, համեմատ, յանդոյն, նմանութիւն հոլովառու բառերը (նախադրութիւնները), ինչպէս նաեւ ըստ + տրական, ըստ + հայցական, ըստ + բացառական կառույցները:

3. Ըստ հաղորդակցական գործընթացի հետ ունեցած փոխյարաբերութեան՝ ՀԴՄները լինում են անուանողական եւ հաղորդակցական: Անուանողական ՀԴՄները զուրկ են ստորոգումային յատկանիշից, հաղորդակցական ՀԴՄներին բնորոշ են ստորոգումը, հնչերանգային աւարտուածութիւնը եւ շարադասութիւնը:

Հաղորդակցական ՀԴՄները հանդէս են գալիս որպէս նախադասութիւն-դարձուածքներ:

**4. Հաղորդակցական ՀԴՄները խմբաւորում են իմաստացին ներքին յատկանիշով:**

**5. Լսու ներկապակցական իմաստային յարաբերութիւնների՝ ՀԴՄներում տարբերակւում են մենիմաստ եւ բազմիմաստ, ըստ միջկապակցական յարաբերութիւնների՝ հոմանիշ (նոյնանիշ ու համանիշ) եւ հականիշ ՀԴՄներ։ Լսու որում, բազմիմաստութիւնը ՀԴՄների իմաստային կառուցուածքում խիստ հազուադէպ է։**

**ՀԴՄների հոմանչութիւնն ու բազմիմաստութիւնը, հականչութիւնն ու բազմիմաստութիւնը սերտօրէն փոխկապակցուած են։**

**6. Հոմանշութիւնը, որպէս միջկապակցական իրողութիւն, երկու կարգի դրսեւորում ունի՝**

**ա) հոմանշային զոյգի անդամների միջեւ,**

**բ) հոմանշային շարքի անդամների միջեւ։**

**7. Հականշութիւնը, որպէս միջկապակցական իրողութիւն, երեք կարգի դրսեւորում ունի՝**

**ա) հականշային զոյգի անդամների միջեւ,**

**բ) ՀԴՄի եւ նրան հականիշ զոյգի միջեւ,**

**գ) հոմանշային տարբեր շարքերի միջեւ։**

### **Summary**

## **THE SEMANTICS OF COMPARATIVE PHRASEOLOGICAL UNITS IN CLASSICAL ARMENIAN**

**LILIT AVETISYAN**

The comparative phraseological units (CPUs) built on imagination are stable binominal compounds. Those components are linked. CPUs are considerable in number within a language structure. Based on the act of communication, CPUs of Classical Armenian are divided into two big classes: communicative and nominative.

Communicative CPUs can be divided following semantic types, including semantically (partial or full) transfigurating compounds. These stable compounds include unilateral CPUs and idiomatic CPUs. Communicative CPUs can also be divided based on thematic groups.

Nominative polysemantic CPUs realise their meanings based on context. Synonymous and antonymous relations are typical of nominative polysemantic CPUs of Classical Armenian. Adjectival, adverbial, and verbal synonymous and antonymous compounds are included among nominative CPUs. The synonymous line of CPUs is a synchronic feature of the language, which consists of two or more CPUs. Antonymic CPUs are included within synonymous correlations with other CPUs, making certain synonymous-antonymous lines.